# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## Անշարժ գույքի վարձակալության

ՀՀ ՊՀ Կ-09/05

ՀՀ, Շիրակի մարզ, գյուղ Ախուրյան
Հինգը մարտի երկու հազար ինը թվականի.

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան գյուղի համայնքը, այսուհետ՝ «Վարձատու», ի դեմս Ախուրյան գյուղի գյուղապետ Արծրունի Ներսեսի Իգիթյանի/ ծնված 10.01.1958թ., անձնագիր AG 0460888՝ տրված 06.04.2005թ. ՀՀ Ոստիկանության 030 ԱԲ/ հաշվառված ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան գյուղում, մի կողմից, և Հայաստանի Հանրապետությունը, այսուհետ՝ «Վարձակալ», ի դեմս ՀՀ բնապահպանության նախարարության, որի աշխատակազմի ղեկավար Ս. Ամիրխանյանի կողմից 30.01.2009թ. տրված թիվ 13 լիազորագրով հանդես է գալիս նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալության Ախուրյանի ջրավազանային տարածքային կառավարման բաժնի պետ ՀՀ քաղ. Սուրեն Սահակյանը/ ծնված 07.04.1946թ., անձն. AA 0488312՝տրված 12.08.1996թ. ՀՀ Ոստիկանության 028 ԱԲ/ հաշվառված ՀՀ, ք. Արթիկ, Գ. Նժդեհի փող., տուն 20, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան գյուղում գտնվող 0.707հա /յոթ հազար յոթանասուն քմ./ մակերեսով բնակավայրի նշանակության հողամասի վրա գտնվող 2734.68քմ/ երկու հազար յոթ հարյուր երեսունչորս ամբողջ վաթսունութ հարյուրերրորդական/ ընդհանուր մակերեսով վարչական շենքի 210քմ/ երկու հարյուր տաս / մակերեսով մասը, այսուհետ՝ ԳՈՒՅՔ, համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հատակագծի:

1.2 Վարձակալի օգտագործմանն են անցնում վարչական շենքի երրորդ հարկի թիվ 1 հատվածի 27.95 քմ / քսանյոթ ամբողջ իննսունհինգ հարյուրերրորդական/ մակերեսով մասը և թիվ 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11- հատվածները ամբողջությամբ:

1.3.Գույքը սեփականության իրավունքով պատկանում է Վարձատուին անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ախուրյանի տարածքային ստորաբաժանման կողմից 04.11.2003թ. տրված թիվ 1623361 սեփականության իրավունքի գրանցման վկայականով:

1.4. Գույքը վարձակալվում է նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալության Ախուրյանի ջրավազանային տարածքային կառավարման բաժնի համար որպես գրասենյակ օգտագործելու նպատակով:

1.5.Վարձատուն երաշխավորում է, որ սույն պայմանագրի 1.1.կետում նշված գույքը վաճառված, գրավ դրված, վարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ, դատական վեճի առարկա չէ, արգելանքի տակ չի գտնվում, ինչը հաստատվում է անշարժ գույքի կադաստրի պետ.կոմի Ախուրյանի տարածքային ստորաբաժանման կողմից 02.03.2009թ. տրված N 0155586 տեղեկանքով:

### 2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1.Վարձատուն իրավունք ունի

2.1.1.Վարձակալից պահանջել գույքն օգտագործելու սույն պայմանագրի պայմաններին համապատասխան:

2.1.2. Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ մուծելու վարձավճարը:

2.1.3.Պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները, եթե Վարձակալը Գույքից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ գույքի նշանակությանն անհամապատասխան:

2.2. Վարձատուն պարտավոր է

2.2.1.Գույքը վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և գույքի նշանակությանը համապատասխանող վիճակում:

2.2.2.Գույքը վարձակալին հանձնել ընդունման-հանձնման ակտով, դրա պատկանելիքներով ու դրան վերաբերող փաստաթղթերով:

2.2.3Վարձակալին նախազգուշացնել գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների /գրավի իրավունք, սերվիտուտ և այլն/ մասին, իր հաշվին իրականացնել շենքի հիմնական վերանորոգումը:

2.2.4 Գույքը այլ անձի օտարելու դեպքում, օտարման պայմանագիրը վավերացնելուց 1/մեկ/ ամիս առաջ գրավոր նախազգուշացնել Վարձակալին:

2.2.5 Գույքը վարձակալին պետք է հանձնվի սույն պայմանագիրը նոտարական կարգով վավերացնելու պահից 3/ երեք/ օրվա ընթացքում:

2.3. Վարձակալն իրավունք ունի

2.3.1. Պահանջել Վարձատուից սույն պայմանագրի 2.2.5 կետում սահմանված ժամկետում իրեն տրամադրել Գույքը:

2.3.2. Վարձատուից պահանջել իրեն տրամադրել գույքը ընդունման-հանձնման ակտով, գույքի պատկանելիքները, դրան վերաբերող փաստաթղթերը:

2.3.3. Գույքի օգտագործմանն ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերություններ հայտնաբերելիս իր ընտրությամբ Վարձատուից պահանջել անհատույց վերացնելու Գույքի թերությունները, կամ համաչափ իջեցնելու վարձավճարը:

2.3.4.Պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը:

2.3.5.Պահանջել նվազեցնելու Վարձավճարի չափը, եթե հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում, գույքի վիճակը վատթարացել է:

2.4.Վարձակալը պարտավոր է

2.4.1. Ժամանակին մուծել գույքն օգտագործելու համար նախատեսված վճարը:

2.4.2.Պայմանագիրը դադարելու դեպքում Վարձատուին վերադարձնել Գույքն իր կողմից ստացված վիճակում, հաշվի առնելով դրա բնական մաշվածությունը:

2.4.3.Ժամանակին մուծել Գույքն օգտագործելու համար նախատեսված կոմունալ ծախսերը/այդ թվում ջրի, էլեկտրաէներգիայի, հեռախոսակապի եվ այլն:

2.5. Վարձավճարը վարձատուին մուծել յուրաքանչյուր եռամսյակը մեկ ՝ մինչև եռամսյակին հաջորդ ամսի 20-ը, փոխանցման կարգով:

2.6.Վճարներն ուշացնելու դեպքում Վարձակալը վարձատուին վճարում է տուգանք պայմանագրի գումարի մեկ տոկոսի չափով և կետանցի յուրաքանչյուր օրվա համար պայմանագրի գումարի 0.5 /կես/ տոկոսի չափով:

2.7.Տուգանքի / տուգանքի կամ տույժի/ վճարում կողմերին չի ազատում նրանց վրա դրված պարտականությունները կատարելուց կամ խախտումները վերացնելուց;

2.8. Վարձատուն պատասխանատվություն պատասխանատվություն չի կրում գույքի այն թերությունների համար, նա նշել է սույն պայմանագիրը կնքելիս, կամ որոնք նախապես հայտնի են վարձակալին կամ պետք է վարձակալի կ հայտնաբերվեին Գույքը զննելիս, կամ գույքը վարձակալության հանձնելիս դրա սարքինությունն ստուգելիս:

3. Պայմանագիրը կնքվում է 20 /քսան/ տարի ժամանակով, մինչև երկու հազար քսանութ թվականի հոկտեմբերի մեկը՝ վարձակալության ժամկետի սկիզբը հաշվելով երկու հազար ութ թվականի հոկտեմբերի մեկից:

4. Գույքի վարձակալության տարեկան վարձավճարը կազմում է 525.000/ հինգ հարյուր քսանհինգ հազար/ ՀՀ դրամ՝ համար 2.500/երկու հազար հինգ հարյուր / ՀՀ դրամ:

5. Վարձատուի պահանջով վարձակալության պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամ լուծվել, եթե վարձակ

5.1.Գույքն օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ գույքի նշանակության էական կամ բազմ խախտումներով:

5.2. էականորեն վատթարացել է գույքի վիճակը.

5.3.Սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրացնելուց հետո երկու անգամից ավելի չի մո վարձավճարը:

5.4. Խախտել է պայմանագրով նախատեսված որևէ կետի պահանջը:

5.5.Ցանկացած այլ ժամանակ՝ միայն պայմանով, որ նա այդ մասին 1/մեկ/ ամիս առաջ պետք է նախազգուշա Վարձակալին:

6.Սույն պայմանագրի գործողության ընթացքում Գույքի օգտագործման արդյունքում Վարձակալի ստացած եկամուտնե նրա սեփականությունն են:

7.Վարձակալության հանձնված գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սո պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար:

8.Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռ չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է առաջին ատյանի դատարանի քննությանը:

9.Սույն պայմանագրով կատարված փոփոխությունները և լրացումները օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր, ստորագրված են կողմերի կողմից, վավերացված նոտարական կարգով եվ դրանցից ծագո իրավունքները գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման պետական լիազոր մարմնում:

10.Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ որոնցից մեկը պահվում է նոտարական գրասենյակում, իսկ մնացած օրինակները տրվում են կողմերին:

11.Պայմանագրից ծագող, բայց պայմանագրով չկարգավորվող հարաբերությունները կարգավորվում են գործող օրենսդրությամբ:

12.Պայմանագրի նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են Վարձակալի կողմից:

13. Սույն պայմանագրից ծագող իրավունքները 30/երեսուն/ օրյա ժամկետում ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ախուրյանի ՏՍ-ում, համաձայն «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 23 հոդվածի:

ՎԱՐՁԱՏՈՒ՝ Ախուրյանի համայնք

Ներկայացուցիչ՝ [illegible] գյուղապետ

ՎԱՐՁԱԿԱԼ՝ ՀՀ

Ներկայացուցիչ՝ ՀՀ, ք. Արթիկ, Գ. Նժդեհի փող., տուն 20 Անձն. AA 0488312՝ տրված 12.08.1996թ. 028 ԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հինգը մարտի երկու հազար ինը թվականի

Սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ Ախուրյան նոտարական տարածքի նոտար Վրեժ Լյուդվիկի Չինիստյանիս կողմից:

Պայմանագիրը ստորագրողների ինքնությունը, նրանց գործունակությունը, անշարժ գույքի պատկանելությունը Ախուրյանի համայնքին, ինչպես նաև իրավաբանական անձանց իրավունակությունը և նրանց ներկայացուցիչների լիազորությունները ստուգված են:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 611 հոդվածի համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական կադաստրի համապատասխան ստորաբաժանումում:

ԳՐԱՆՑՎԱԾ Է ՍԵՂԱՆԱՄԱՏՅԱՆՈՒՄ ԹԻՎ 370 ՈՎ

ԳԱՆՁՎԱԾ Է պետական տուրք և ծառայության վճար համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 25.04.2002թ. թիվ 919-Ն որոշման:

ՆՈՏԱՐ Վ.Լ. ՉԻՆԻՍՏՅԱՆ

Կողմերի վավերապայմաններ

| *ՎԱՐՁԱԿԱԼ* | *ՎԱՐՁԱՏՈՒ* |
|---|---|
| ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | ԱԽՈՒՐՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | Գյումրիի ՏԳԲ |
| h/h 900011007854 | h/h 900215302119 |
| hվhh 02507198 | hվhh 05800921 |

3021302
ՆՈՏԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ
NOTARIAL DOCUMENT

ՇԵՆՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

1:400

(ՄԱՍՇՏԱԲ)

ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ II ՀԱՐԿ



H = 3.3

h = 3.0

D = 0.5

d = 0.5

d₁ = 0.1

ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ III ՀԱՐԿ



H = 3.3

h = 3.0

D = 0.5

d = 0.5

d₁ = 0.1

210.0 Ք.Մ.

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ ՏԱՐԱԾՔ

Համաձայն եմ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

N 2,3,4,5,6,7,8 սենյակները և N 1 միջանցք 27.95 ք.մ.

27.95

ՎԱՐՁԱԿԱԼԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ Ի ԴԵՄՍ
ԱՆՈՒՆԸ (ԱՆՎԱՆՈՒՄԸ) ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՎԱՐՁԱՏՈՒԻ
ԱՆՈՒՆԸ (ԱՆՎԱՆՈՒՄԸ) ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԱԽՈՒՐՅԱՆ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ
ԱՄԻՍԸ, ԱՄՍԱԹԻՎԸ, ՀԱՄԱՐԸ 05.03.2009Թ. ՄԵՀԱՆԱՄԱՏՅԱՆ № 370
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ
ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ, ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՇՄ ԱԽՈՒՐՅԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,707 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ 2734,68 Ք.Մ. ՄԱԿ-ՈՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ 210,0 Ք.Մ. ՄԱԿ-Ը, ԱՅՆ Է՝ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ III-ՀԱՐԿԻ №1 ՀԱՏՎԱԾԻՑ 27,95 ՔՄ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ №№ 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, ՀԱՏՎԱԾՆԵՐԸ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ.
ԱՌԱՐԿԱՅԻ ՉԱՓԸ (ՄԱԿԵՐԵՍԸ)
ԱՅԴ ԹՎՈՒՄ՝
ԸՍՏ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ

ՇԵՆՔԵՐ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՄԱԿԵՐԵՍԸ)
ՈՐԻՑ՝
ԲՆԱԿԵԼԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ 210.0 Ք.Մ.
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ (ԴՐԱՄ) 525.000 (ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆՀԻՆԳ ՀԱԶԱՐ) ՀՀ ԴՐԱՄ ՏԱՐԵԿԱՆ
ԱՅԴ ԹՎՈՒՄ՝
ՀՈՂ
ՇԵՆՔ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 20 (ՔՍԱՆ) ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վկայականի համարը 0099692

## Հատակագիծ

(մասշտաբը) 1:400 III ՀԱՐԿ



H=3.30 h=3.0
D=0.50 d=0.6
d=0.10

Կատարող Ս. ԽԱՉԻՐՅԱՆ
(ստորագրություն)

**Սույն վկայականը կազմված է երկու օրինակից, որոնցից մեկը տրվում է վարձակալին, մյուսը պահվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումում:**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանման ղեկավար

Գ. ՇԱՀԻՆՅԱՆ
(ստորագրություն)

« 17 » 03 2009թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան
գ.Ախուրյան , 2601, Գյումրիի խճ.42
Հեռ. (374312) 70885
Վեբ կայք: www.Akhuryan.am

«14» դեկտեմբերի 2017թ.

№ 43/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԱՐԾՎԻԿ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ

Հարգարժան նախարար

<<Հայաստանի Հանրապետության Վարչատարածքային բաժանման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի համաձայն վերակազմավորման արդյունքում Ախուրյան, Այգաբաց, Արևիկ, Բասեն, Կամո, Կառնուտ,Հովիտ, Ջրառատ գյուղերը վերակազմավորվել են որպես մեկ համայնք՝ Ախուրյան համայնք:

<<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկը վերագրանցվել է և կատարվել է պետռեգիստրի վկայականի համարի և հարկային կոդի փոփոխություն՝ ՀՎՀՀ 05545973 :

Խնդրվում է նշված գյուղերի հարկային հաշիվները դուրս գրել 05545973 ՀՎՀՀ –ով՝ նշելով համայնքը և կազմում ընդգրկված գյուղի անունը

Կից ներկայացվում է պետռեգիստրի վկայականի պատճենը:

Հարգանքով՝

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղար Հ.Խաչատրյան

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2017-12-04

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
## Համայնքային կառավարչական հիմնարկ (Համայնքային կառավարչական հիմնարկ)

| | |
|---|---|
| Գրանցման համար | 55.181.995999 |
| Հիմնադրման տարի | 2017 |
| Գրանցման ամսաթիվ | 2017-12-04 |
| Գործունեության ժամկետ | Անժամկետ |
| Կարգավիճակ | Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն: |
| Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ) | 50834216 |
| Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) | 05545973 |
| Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր) | 26185999 |
| Էլ. փոստ | - |
| Կայք | - |

### Գտնվելու վայրը

| | |
|---|---|
| Հասցե | ԳՅՈՒՄՐԻԻ ԽՃՂ. / Շ / 42 ԱԽՈՒՐՅԱՆ 2601 ՇԻՐԱԿ ՀԱՅԱՍՏԱՆ |
| Հեռախոս | 094680195 |

### Գործադիր մարմնի ղեկավար

| | |
|---|---|
| Պաշտոն | Աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար |
| Անուն Ազգանուն | ՀԱՅԿԱՆՈՒՇ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄԻՍԱԿԻ |
| Անձնագրային տվյալներ | 008657280 2017-10-26 030 |
| Հասցե | ԱԽՈՒՐՅԱՆԻ ԽՃՂ. / Տ / 1 ԱԽՈՒՐՅԱՆ 2601 ՇԻՐԱԿ ՀԱՅԱՍՏԱՆ |

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2017-11-30
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
Համայնքային կառավարչական հիմնարկ (Համայնքային կառավարչական հիմնարկ)

## Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) **գրանցված չեն**

## Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Պետական միասնական գրանցամատյանում փոփոխություններ կատարված չեն

| Գրանցման ամսաթիվ | Փոփոխություններ |
|---|---|

Քաղվածքը տրամադրող՝ ____________ **ԽԱՉԱՏՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆ ՎԵԼԻԽԱՆԻ**
ստորագրություն

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝ 04-12-2017

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ